Կտրող և հղկող սկավառակներ

Օգտագործմանը և անվտանգությանը վերաբերող ընդհանուր ցուցումներ

- Սկավառակների ճիշտ պահպանում--> չոր տեղում, 20´C սենյակային ջերմաստիճանի պայմաններում:
- Աշխատել միայն համապատասխան հագուստով՝ պաշտպանիչ ակնոց, ձեռնոցներ, աշխ. հատուկ կոշիկ, պաշտպանիչ ականջակալ և հակափոշիական շնչադիմակ
- Կտրիչ և հղկելու սկավառակները ամրացնե՛լ միայն հատուկ դրա համար նախատեսված սեղմիչ մանեկներով և կցաշուրթերով: Չկիրառե՛լ մաշված ամրակման մանեկներ և կցաշուրթեր
- Սկավառակների հետ աշխատանքները պետք է իրականացվեն միայն ապահովիչ պատյանի առկայությամբ:
- Շատ վտանգավոր է վնասված սկավառակի կիրառելը: Աշխատե՛ք միայն չվնասված սկավառակներով
- Պահպանե՛լ սկավառակի պտտման թույլատրելի արագությունը
- Չկիրառե՛լ մաշված սկավառակները ավելի փոքր տրամագծով սարքերի հետ

Կիրառման բնագավառները

Նյութեր	Նյութերի անվանումներ
Պողպատ	Կառուցվածքային պողպատներ, գործիքային պողպատներ, ամրացված պողպատ
Գունավոր մետաղներ / ալյունիմ	Ալյումին Ալյումինի համաձուլվածք Պղինձ, Բրոնզ Արույր Այլ գունավոր մետաղներ
Չժանգոտվող պողպատ	Թերթեր չժանգոտվող պողպատից, Լեգիրված, չլեգիրված և ուժեղ լեգիրված պողպատներ: Թթվակայուն, քրոմանիկելային պողպատներ:
Քար	Բնական և արհեստական քար Սիլիկատային քար Բետոն և երկաթբետոն

Աշխատանքային և անվտանգ. հատուկ ցուցումներ

Կտրման աշխատանքներ

- Կտրիչ սկավառակները նախատեսված չեն հղկման աշխատանքների համար
- Աշխ. ընթացքում սարքը չշրջե՛լ և չթեքե՛լ
  → Սկավ. կոտրման հավանակ. մեծ է
- Թեթևակի առաջ-հետ շարժումները հեշտացնում են կտրելը:
- Հետևեք սեղմման ճիշտ ճնշմանը
  → Որպես կանոն գործիքի ինքնաքաշը բավական է
- Մշակվելիք դետալը պետք է լավ ամրացված լինի
- Կտրող սկավառակը մշտապես մետաղական օղակով ձգել սարքին (ուղիղ դիզայն)
- **Ուշադրություն դարձրե՛ք:** 1 մմ սկավառակի դեպքում պետք է հետևել, որ գործիքի կցաշուրթը ամուր սեղմի սկավառակը: Անհրաժեշտության դեպքում սկավառակի և կցաշուրթի միջև արանքը կոմպենսացրեք հատուկ դրա համար նախատեսված օղակներով:

Հղկման աշխատանքներ

- Նախատեսված է ձեռքով հղկման համար
- Հղկումը պետք է իրականացվի ճիշտ անկյան տակ:
  → Եթե անկյունը շատ փոքր լինի, ապա սկավառակը կսկսի փշրամաշվել եզրերի մասերում:





MWF - 06/07 - 00094 - ©